

խոսական երկիր մը յանկարծ բերրի եւ վարուն կը դառնայ եւ առատապտուղ կը զարգանայ, հակառակ քաղաքական կեանքի պղտորութեան եւ ներքին կեանքի բազմաշփոթ դրութեան: Դաւրիժեցի (254) այս փոփոխութեան սկզբնապատճառ կը տեսնէ Սարգիս Եպիսկոպոսն եւ տէր Կիրակոսը. ասոնք «եղեն սկիզբն անապատիս եւ անապատս եղեւ մայր եւ ծնող ամենայն անապատաց եւ առիթ լուսաւորութեան ազգիս Հայոց»: Եւ յառաջ տանելով իր բղխողական տրամաբանութիւնը կ'աւելցնէ. «ի վերայ բարի համբաւոյ նոցա եկին բազումք եւ յարեցան ի նոսա եւ եղեն նոցա միաբանք» (էջ 254). Եւ անոնցմէ յառաջ եկան, զարգացան «արք պիտանիք եւ օգտակարք աշխարհի, վարդապետք, եպիսկոպոսք, արեղայք եւ երիցունք. եւ ամենայն վանօրայք, որք ամայեացեալք ի խաւարի կային՝ եղեն լցեալք միաբանօք, արեղայիւք եւ կրօնաւորօք. եւ զեղօրայք՝ վարժ երիցամբք» (307): Այս ըմբռնումը, որ ժամանակակիցներուն սեպհականութիւնն էր, կ'արտայայտէ նաեւ Մարտիրոս քահանայ 1638ին վերազրելով ամբողջն Մովսէսի: Իր զննութեան նիւթ առնելով 1631 տարին կը գրէ, թէ «Մովսէս կաթողիկոսի եւ երկրորդ լուսաւորչի» օրով «կրկնակի լուսաւորեցան Հայք. զի փայլէր նա որպէս զարեգակն ի մեծ եկլեսիաւսին. եւ անդուստ լուսատու ճաճանչօքն իւրովք, այս ինքն ընտրելովքն Աստուծոյ եւ